

ԿԱՐԾԻՔ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ նկատառումները հանգում են հետևյալին.

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում¹ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի² 1-ին հոդվածով առաջարկվում է սույն օրենսգիրքը լրացնել նոր 169.26-րդ հոդվածով, իսկ նույն նախագծի 2-րդ հոդվածում համապատասխանաբար հղում է կատարվում նոր ավելացված 169.26-րդ հոդվածին, սակայն ՎԻՎՕ-ն չունի 169.25-րդ հոդված:

Առաջարկում ենք վերոնշյալ նախագծի 1-ին հոդվածով նախատեսված լրացումը սահմանել 169.25-րդ հոդվածով և ըստ այդմ 2-րդ հոդվածում հղում կատարել 169.25-րդ հոդվածին:

2. ՎԻՎՕ նախագծով օրենսգրքում ավելացվող 169.26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագիրը, ինչպես նաև փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագիրը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում *չներկայացնելը*¹ առաջացնում է նախազգուշացում:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նախազգուշացումից հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարագիրը *չներկայացնելը*¹ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի՝ երկուհարյուրապատիկի չափով: Սույն հոդվածի 2-րդ մասով

¹ Այսուհետ՝ ՎԻՎՕ

² Այսուհետ՝ ՎԻՎՕ նախագիծ

սահմանված տուգանքի նշանակումից հետո 60 օրվա ընթացքում հայտարարագիրը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով *չներկայացնելը*՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի՝ հազարապատիկի չափով:

Իսկ 169.26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տվյալ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետում հայտարարագիրը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով *չներկայացնելու* դեպքում հայտարարագիրը համարվում է *չներկայացված*:

Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով օրենսգիրքը լրացվում է 314²-րդ հոդվածով, որով բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագիրը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագիրը *Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված դեպքերում չներկայացնելը*՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից երկուհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Նշված հանցակազմի դիսպոզիցիայի տառացի մեկնաբանման արդյունքում անձը կարող է միաժամանակ պատասխանատվության ենթարկվել և՛ ՎԻՎՕ նախագծով լրացվող 169.26-րդ հոդվածով, և՛ ՀՀ քրեական օրենսգրքում ավելացվող 314²-րդ հոդվածով: Հասկանալի չէ նաև, թե որ պահից սկսած հայտարարագիր *չներկայացնելը* ՀՀ քրեական օրենսգրքի լրացվող հոդվածի իմաստով համարվում է «*Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված դեպքերում չներկայացված*»: Այս առումով հստակ չէ, թե արդյոք այն կիրառվելու է ՎԻՎՕ նախագծով սահմանված 169.26-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված ժամկետին անմիջականորեն հաջորդող օրը, թե՛ ոչ:

Համեմատության համար նշենք ՎԻՎՕ 48-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 315¹ հոդվածների կարգավորումները: Այսպես, ՎԻՎՕ 48-րդ հոդվածով սահմանվում է պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնական զավթելը և դրա հետևանքները չվերացնելը զանցակազմը: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 315¹ հոդվածով սահմանվում է, որ քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնական զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով

շենքի, շինության կառուցումը կամ վերակառուցումը չդադարեցնելը և (կամ) անօրինական կառույցները չքանդելը, որոնք կատարվել են նույն արարքի համար կրկնակի վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով:

Ստացվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքում տվյալ դրույթով հստակ սահմանվում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում կրկին անգործություն ցուցաբերելը համարվում է քրեորեն պատժելի արարք: Կարծում ենք, որ այդպիսի մոտեցում պետք է ցուցաբերվի նաև խնդրո առարկա հացակազմի դիսպոզիցիան ձևակերպելիս՝ հաշվի առնելով այն, որ քննարկվող արարքում ևս առկա է տևող հանցագործություն (անգործություն):

Ելնելով վերոգրյալից՝ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք հստակեցնել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով օրենսգրքում լրացվող 314²-րդ հոդվածի հանցակազմի դիսպոզիցիան:

3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացվող նոր 169.26-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանել, որ գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում, ինչպես նաև փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագրում *սխալ կամ ոչ ամբողջական տվյալ* ներկայացնելը, *եթե դա չի պարունակում հանցագործության հատկանիշներ*՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

Իսկ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքը լրացվում է 314³-րդ հոդվածով, ըստ որի բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագրում *կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը*՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Վերոնշյալ դրույթների՝ գործնականում տարաբնույթ մեկնաբանման արդյունքում կարող են չարաշահումների տեղիք տալ, քանի որ թե՛ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, թե՛ ՀՀ քրեական օրենսգրքի առաջարկվող փոփոխությունները

բավականին հստակ չեն ձևակերպված: Մասնավորապես, ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու և տվյալ թաքցնելու դեպքում էլ պաշտոնատար անձը ներկայացնում է տվյալների այնպիսի ամբողջություն, որոնք չեն արտահայտում իր գույքային իրական վիճակը, ինչպես նաև սխալ կամ կեղծ տվյալ ներկայացնելու դեպքում ևս ներկայացվում են ողջ ամբողջական տվյալներ: Ավելին՝ կեղծ տվյալը որոշ դեպքերում կարող է մեկնաբանման արդյունքում համարվել սխալ տվյալ:

Չնայած նրան, որ ՎԻՎՕ փոփոխությամբ նշվում է, որ արարքը առաջացնում է տուգանք այդ օրենսգրքով, *եթե այն չի պարունակում հանցագործության հատկանիշներ, այնուամենայնիվ գտնում ենք, որ նման լուծումը ամբողջությամբ չի կարող լուծել հարցը, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքում առաջարկվող նոր հոդվածը չունի հստակորեն ամրագրված հանցագործության հատկանիշներ: Նման պարագայում, իհարկե, հաշվի կառնվի դիտավորությունը, այնուամենայնիվ գտնում ենք, որ վերոշնչյալ ձևակերպումները մի շարք դեպքերում կրկնվում են և կարող են տարաբնույթ մեկնաբանվել:*

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք հստակեցնել ՎԻՎՕ նախագծի 1-ին հոդվածով նախատեսված լրացվող նոր 169.26-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվող «սխալ կամ ոչ ամբողջական տվյալ», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 314³-րդ հոդվածով սահմանված «կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը» հասկացությունները:

4. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասը լրացվում է նոր 7-րդ կետով, համաձայն որի բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործառույթներից է նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագիրը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագիրը բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու, կամ հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և հայտարարագրի ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու, կամ հայտարարագրում սխալ, ոչ ամբողջական կամ կեղծ տվյալ ներկայացնելու, կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելը և վարչական տույժեր նշանակելը:

Վերոգրյալ լրացման արդյունքում ստացվում է, որ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը քննելու է նաև կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու դեպքերը և վարչական տույժեր է նշանակելու դրանց համար: Սակայն տվյալ նախագծին կից ներկայացված «Հայաստանի

Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նույն հատկանիշներով, մասնավորապես՝ հայտարարագրման ժամանակ *կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը, նախատեսված է նոր հանցակազմ:*

Քանի որ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը չի հանդիսանում քրեական գործերով վարույթ իրականացնող մարմին, իսկ համապատասխան հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ տվյալ թաքցնելը սահմանվում է որպես քրեորեն պատժելի արարք, առաջարկում ենք վերոնշյալ նախագծից հանել հայտարարագրում *կեղծ տվյալ* ներկայացնելու, կամ *տվյալը թաքցնելու* դեպքերով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից քննություն իրականացնելու և վարչական տույժ նշանակելու գործառույթը:

5. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով օրենսգիրքը լրացվում է 314³-րդ հոդվածով, որով բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Նախագծով, սակայն, տվյալ արարքի համար սահմանված չէ որևէ ծանրացնող հանգամանք: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում, օրինակ՝ 205-րդ հոդվածում (Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը), նախատեսված արարքը՝ առանձնապես խոշոր չափերով կատարելը, ամրագրված է որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք: Հաշվի առնելով հարցի կարևորությունը և հակակոռուպցիոն բնագավառում ՀՀ որդեգրած քաղաքականությունը՝ հիմնավոր ենք համարում Նախագծի նշյալ հոդվածում ծանրացնող հանգամանքի նախատեսումը, որը բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի նմանատիպ հանցակազմերի ամրագրման ընդհանուր տրամաբանությունից:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսել նույն արարքն առավել խոշոր չափերով կատարելը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ